ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2019թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-127-02.05.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-127-02.05.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկում է՝

1. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է համայնքի ավագանու լիազորություններից հանել համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ ՀՈԱԿ) ղեկավարներին համաձայնություն տալու լիազորությունը, իսկ նախագծի 2-րդ հոդվածով համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորություններից հանել ՀՈԱԿ-ի ղեկավարների նշանակման և ազատման լիազորությունը: Սակայն, հարկ է նշել, որ նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 35.1-ին հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ եզրակացությունն աշխատակազմի կողմից ուղարկվում է տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին: Հիշյալ նորմերի վերլուծությունից ելնելով՝ առաջարկում ենք նախագծով հստակեցնել պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

2. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվում է օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետից հանել «Ավագանու կողմից երկու անգամ համաձայնություն չտալու դեպքում համայնքի ղեկավարը նշանակում է կատարում առանց համաձայնեցնելու ավագանու հետ» բառերը: Մինչդեռ ներկայացվող նախագծի կարգավորման առարկայից դուրս է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների, բացառությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելու հարցերը: Ուստի, նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասն առաջարկում ենք հանել, քանի որ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնում նշանակելու կարգավորումները տրվում են նախագծի 35.1-ին հոդվածում:

3. Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է օրենքը լրացնել 35.1-ին հոդվածով, ինչի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նշված օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման հասկացությունը, սկզբունքները, մարմինները, համայնքի պարտադիր խնդիրները, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, դրանց իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքերն ու երաշխիքները, Գյումրի և Վանաձոր համայնքներում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները, ինչպես նաև կարգավորում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները: Մինչդեռ, նախագծի 3-րդ հոդվածով նախատեսված լրացմամբ սահմանվում է համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը, որը չի կարող հանդիսանալ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի կարգավորման առարկա:

Բացի այդ, կարգում անհրաժեշտ է նախատեսել մրցույթի կազմակերպմանը և անցկացմանը վերաբերող լրացուցիչ կարգավորումներ, ինչը հնարավորություն կտա ապահովելու մրցույթի անցկացման թափանցիկությունը, օբյեկտիվությունը և միաժամանակ խուսափել հնարավոր կոռուպցիոն ռիսկերից:

Այսպես՝ անհրաժեշտ է նախատեսել, թե ինչ ժամկետում են ընդունվում մրցույթին մասնակցելու մասին հայտերը հայտարարությունները հրապարակվելուց հետո: Անհրաժեշտ է նաև նախատեսել, թե երբ է նշանակվում մրցույթը՝ հայտերն ընդունելու ավարտից հետո: Բացի այդ, անհրաժեշտ է նախատեսել բոլոր թեկնածուների հետ քննարկման անցկացման համար որոշակի ժամկետ՝ օրինակ, 30 րոպե կամ 1 ժամ: Նախագծի համաձայն՝ մրցույթն անցկացվում է հարցազրույցի միջոցով, որի ընթացքում թեկնածուն ներկայացնում է նաև իր աշխատանքային ծրագիրը: Այդ առումով հարցազրույցի անցկացման չափանիշները հստակեցնելու և սուբյեկտիվիզմի գործոնը վերացնելու համար գտնում ենք, որ հարցազրույցի ընթացքում պետք

է քննարկվի միայն թեկնածուի կողմից ներկայացված աշխատանքային ծրագիրը: Բացի այդ, անհրաժեշտ է նախատեսել մրցույթի ձայնագրմանը վերաբերող դրույթներ, ինչը նույնպես կապահովի մրցույթի անցկացման օբյեկտիվությունը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև հետևյալը՝

1) 35.1-ին հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ եզրակացությունն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին նշանակում է համապատասխան պաշտոնում: Նկատի ունենալով օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածներում առաջարկվող փոփոխությունները և լրացումները, պարզ չէ և անհրաժեշտ է հստակեցնել, թե որ պաշտոնատար անձի մասին է խոսքը.

2) 35.1-ին հոդվածի դրույթները վերաբերում են համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին և այդ պաշտոնին նշանակվելուն: Նախագծով առաջարկվող օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ նշանակում և ազատում է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին՝ բացառությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների: Նախագծով առաջարկվող կարգավորումների դեպքում նախագծում բացակայում են համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնից ազատելու վերաբերյալ դրույթները, որոնք անհրաժեշտ է նախատեսել:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ նշված կարգավորումները պետք է տեղ գտնեն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգում, սակայն մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման դետալացված նկարագրությունը նպատակահարմար չէ կատարել օրենքում: Այդ առումով առաջարկում ենք նախագծով սահմանել, որ մրցույթի անցկացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության

լիազորած պետական կառավարման մարմինը: Այդ նպատակով առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածը հանել, իսկ 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի առաջին նախադասությունը «ղեկավարներին» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների, որոնք նշանակվում են մրցույթի արդյունքներով: Համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատում է սույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված մարմինը» բառերով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունիսի 2019 թվականի N 701 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-127-02.05.2019-ՏՏԳԲ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հունիսի 5
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 07-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետից հանել «և ոչ առևտրային կազմակերպությունների» բառերը:

Հոդված 2.

1. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի առաջին նախադասությունը «ղեկավարներին» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների» բառերով:

2. Նույն կետից հանել «: Ավագանու կողմից երկու անգամ համաձայնություն չտալու դեպքում համայնքի ղեկավարը նշանակում է կատարում առանց համաձայնեցնելու ավագանու հետ» բառերը:

Հոդված 3.

Օրենքը լրացնել նոր 35^1–ին հոդվածով.

«**Հոդված 35^1. Համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը**

1. Համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն առաջանալու դեպքում այդ պաշտոնն զբաղեցվում է մրցույթով:

2. Համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու համար համապատասխան համայնքի ղեկավարը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև նույն հայտարարությունը փակցնում է համայնքապետարանի հայտարարությունների համար նախատեսված վայրում:

3. Համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է աշխատակազմը:

4. Մրցութային հանձնաժողովը անձին չի թույլատրում մասնակցել մրցույթին, եթե անձը չի բավարարում հետևյալ պահանջներին՝

- առնվազն 26 տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ,
- ունի համապատասխան ոլորտի միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն,
- ունի համապատասխան ոլորտում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ,
- չունի դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն:

5. Մրցույթն անցկացվում է նաև, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

6. Համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթն անցկացվում է հարցազրույցի միջոցով, որի ընթացքում թեկնածուն ներկայացնում է նաև իր աշխատանքային ծրագիրը:

7. Երևան, Գյումրի և Վանաձոր համայնքներում մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարը, ավագանու խմբակցություններից 5-ական անդամներ, ինչպես նաև համայնքապետարանի համապատասխան վարչության կամ բաժնի ներկայացուցիչը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Մյուս համայնքներում մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարը և ավագանու 5 անդամ՝ վիճակահանությամբ, ինչպես նաև համայնքապետարանի համապատասխան վարչության կամ բաժնի ներկայացուցիչը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

8. Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հարցազրույցի միջոցով յուրաքանչյուր մասնակցի գործնական կարողությունները գնահատում է 5-բալանոց համակարգով:

Մրցույթի հաղթող է ճանաչվում այն անձը, ում ստացած բալերի հանրագումարն առավելագույնն է:

Եթե երկու կամ ավելի մասնակիցներ հավաքել են առավելագույն հավասար հանրագումար, ապա հաղթողը որոշվում է ավագանու բաց քվեարկության միջոցով:

9. Մրցույթի արդյունքները հրապարակվում են դրանք պարզ դառնալուց անմիջապես հետո:

10. Մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո մրցույթի անցկացման կարգի խախտումների վերաբերյալ մասնակցի կողմից կարող է բողոք ներկայացվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

11. Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված բողոքի բացակայության դեպքում համապատասխան մրցութային հանձնաժողովից ստացված՝ մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) վերաբերյալ եզրակացությունը մրցույթի

նախապատրաստական աշխատանքներ իրականացնող աշխատակազմն ուղարկում է տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին: Եզրակացությունն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին նշանակում է համապատասխան պաշտոնում:

12. Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված խոչընդոտներից առնվազն մեկը, ինչպես նաև եթե մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, ապա մրցույթը համարվում է չկայացած, և անցկացվում է նոր մրցույթ:

13. Սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված կարգով ներկայացված բողոքի հիման վրա՝ մրցույթը դատարանի կողմից անվավեր ճանաչվելու դեպքում անցկացվում է նոր մրցույթ՝ ընդհանուր հիմունքներով:»:

Հոդված 4.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Նախագծով առաջարկվող փոփոխությունների արդյունքում՝ համայնքի ավագանուն «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության» օրենքով հնարավորություն կտրվի ընտրել համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի լավագույն թեկնածուին՝ ի տարբերություն գործող կարգավորման, որի համաձայն՝ համայնքի ղեկավարն ունի բացառիկ իրավունք առաջադրելու համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թեկնածու, իսկ ավագանին կա՛մ հաստատում է նրա թեկնածությունը, կա՛մ մերժում:

Ներկայացված նախագծով նաև հավասար մրցակցային պայմաններ են ստեղծվում մասնագետ-թեկնածուների համար:

Միաժամանակ սահմանվում են հետևյալ մասնագիտական և այլ չափանիշները՝

- առնվազն 26 տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ,
- ունի համապատասխան ոլորտի միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն,
- ունի համապատասխան ոլորտում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ,
- չունի դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն: